ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 41

22 մայիսի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՈՒՄԸ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ, ԲԱԳՐԱՎԱՆ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ 72 ՏԵՂ ՀԶՈՐՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՇԵՆՔԵՐԻՆ ԿԻՑ ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ (ՓԱԽՍՏԱՐԱՆՆԵՐ) ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քանի որ սուբվենցիոն ծրագրերում պարտադիր պայման է դարձել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան, Բագրավան, Իսահակյան բնակավայրերի մանկապարտեզներին կից ապաստարանների առկայությունը և շտկման համար հատկացված ժամկետում գնման որևէ ընթացակարգ կիրառելի չէ, բացի մեկ անձից գնման ընթացակարգը, ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման N 1 Հավելվածով , 23-րդ կետի 5-րդ ենթակետի <<բ>> և <<գ>> պարբերություններով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 42-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2022 թվականի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շինարարական աշխատանքների բնույթը, ծավալները և սույն տարում ավարտելու պահանջը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է</u>

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմին համայնքի 2022 թվականի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շինարարական աշխատանքների գնման գործընթացը կատարել հրատապ բաց մրցույթի ընթացակարգով:
2. Տալ համաձայնություն՝ մեկ անձից գնման ընթացակարգով կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան, Բագրավան և Իսահակյան բնակավայրերի մանկապարտեզների ապաստարանների նախագծանախահաշվային փաստաթղթերի գնման գործընթացը, որի գինը կարող է գերազանցել գնումների բազային միավորը 1000000 /մեկ միլիոն/ Հայաստանի Հանրապետության դրամը :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ -12 Դեմ՝-0 Ձեռնպահ՝-0

Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Ա. ԱՐՄԵՆՅԱՆ

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Մ.ՂԱԶԱՐՅԱՆ

Գ.ՂԶՐՈՅԱՆ

Բ. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա.ՆԱԶԱՐՅԱՆ

Ա. ՆԻԿՈՅԱՆ

Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ

Վ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ՎԱՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2022 թվականի մայիսի 12
Քաղաք Մարալիկ